ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/2-ՏԾԻԳ-16/1-3/2019
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ք. Երևան **<<23>> հունվարի 2019թ.**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ս.Ամիրխանյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Երեք բռունցք» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Հ. Հարությունյանի ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 2015թ. դեկտեմբերի 24-ին կնքված ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/2-ՏԾԻԳ-16/1-3 գնման պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր) կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Կապալառուն պարտավորվում է Պայմանագրով և սույն Համաձայնագրով սահմանված կարգով Պատվիրատուի հանձնարարությամբ իրականացնել Պայմանագրով նախատեսված Հայաստանի Հանրապետության Նալբանդի թունելի պահպանման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանքներ)՝ համաձայն սույն Համաձայնագրի N 1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի և Աշխատանքների արդյունքը հանձնել Պատվիրատուին, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Աշխատանքները և վճարել դրանց համար:

1.2 Աշխատանքների հանձնում-ընդունումը կատարվում է Պայմանագրով սահմանված կարգով՝ կարգի պահանջներին համապատասխան:

1.3 Սույն համաձայնագրով սահմանված պարտավորությունները տարածվում են 2019 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա և գործում են մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի 2019 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 32 035 500 (երեսուներկու միլիոն երեսունհինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն իրեն հանձնված Աշխատանքների դիմաց վճարում է Պայմանագրով նախատեսված կարգով՝ սույն Համաձայնագրի N 2 հավելվածին՝ ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցին համապատասխան:

2.3 Դեկտեմբեր ամսվա համար նախատեսված վճարումները կատավում է մինչև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գնումների մասով ստանձնած պարտավորությունների կատարման համար նախատեսված վճարումների վերջնաժամկետը:

3. Պայմանագրի 2.4 կետը լրացնել նոր 2.4.4 ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

<<2.4.4 Կատարողը պարտավոր է.

Ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների իրականացման ընթացքում ապահովել.

1. կազմակերպության ներկայացուցչի մասնակցությունը ճանապարհատրասպորտային պատահարների դեպքի վայրում, անհապաղ տեղեկացնել պատվիրատուին պատահարի մասին, մասնակցել արձանագրության կազմմանը, հանդես գալ որպես կողմ պատվիրատուի անունից>>:

4. Այլ պայմաններ

4.1 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում Աշխատանքների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

4.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

4.3 Սույն համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 հավելվածները հանդիսանում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

5.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՏԱՐՈՂ**
ՀՀ տրանսպորտի, կապիև տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն	«Երեք բռունցք» ՍՊԸ
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3	ՀՀ, ք. Երևան, Մյասնիկյան պողոտա 7շ., բն.2
Կենտրոնական Գանձապետարան	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011012136	Հ/Հ 205002226442
ՀՎՀՀ 02565518	ՀՎՀՀ 01230857
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
<<23>> հունվարի 2019թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/2-ՏԾԻԳ-16/1-3/2019 համաձայնագրի

Գնման ժամանակացույց

/ՀՀ դրամ/

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Գնումը՝ 2019թ				Ընդամենը
		I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	
[redacted]						
1	Հայաստանի Հանրապետության Նալբանդի թունելի պահպանման աշխատանքների	**8,008,875,0**	**8,008,875,0**	**8,008,875,0**	**8,008,875,0**	**32,035,500,0**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի, կապիև տեղեկատվական
տեխնոլոգիաների նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011012136
ՀՎՀՀ 02565518

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Երեք բռունցք» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մյասնիկյան պողոտա 7շ., բն.2
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 205002226442
ՀՎՀՀ 01230857

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 2
«29» հունվարի 2019թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/2-ՏԾԻԳ-16/1-3/2019 համաձայնագրի

Ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույց

/ՀՀ դրամ/

	Ձեռքբերվող աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2019թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												Ընդամենը տարի
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	Հայաստանի Հանրապետության Նալբանդի թունելի պահպանման աշխատանքների	8,008,800,0	8,008,800,0	8,008,800,0	15,017,600,0	15,017,600,0	15,017,600,0	24,026,400,0	24,026,400,0	24,026,400,0	32,035,500,0	32,035,500,0	32,035,500,0	32,035,500,0

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի, կապիև տեղեկատվական
տեխնոլոգիաների նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011012136
ՀՎՀՀ 02565518

(ստորագրություն)

Տ.Հ.

ԿԱՏԱՐՈՂ
«Երեք բրունցք» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մյասնիկյան պողոտա 7շ., բն.2
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 205002226442
ՀՎՀՀ 01230857

(ստորագրություն)